

ԳՐԱԲԱՐԻ ՀՈՒՈՎՆԵՐԸ ԼԱՏԻՆԱԲԱՆ ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Ա. Ս. ՄԱՐԴԱՐՅԱՆ

Հայերենի քերականության պատմության մեջ XV դարից հետո սկսվում է մի նոր շրջան, որը, ինչպես հայտնի է, նշանավորվում է մի խումբ, այսպես կոչված, լատինաբան քերականների գործունեությամբ¹։ Այդ շրջանում, որ ձգվում է գրեթե մինչև XVII դ. վերջերը, հայ քերականագիտական միտքը, վեր բարձրանալով² Ի. Թրակացու և նրա մեկնիչների՝ մեծ մասամբ կաղապարային բնույթի ըմբռնումներից ու մեկնողական նկարագրություններից, զարգանում և լեզվական փաստերի ուսումնասիրությամբ շատ ավելի լայնորեն է արտացոլում գրաբարի քերականությունը։ Դա տեղի է ունենում աստիճանաբար, լեզվաբանական-քերականական գիտության զարգացմանը համընթաց։ Ընդ որում, եթե XVI դարը մի տեսակ անպտուղ է մնում, ապա XVII—XVIII դարերը տալիս են մի շարք քերականներ, որոնք սկսում են ավելի հանգամանորեն ուսումնասիրել գրաբարը, ավելի գիտականորեն բացահայտել նրա քերականական իրողությունները և դրանց հետ կապված՝ նաև հոլովներն ու հոլովական համակարգը։

Ի տարբերություն նախորդ շրջանի հունաբան քերականների, այս շրջանի քերականների համար ուղեցույց է ծառայում լատիներենը՝ իր քերականությամբ, որին հետևելով էլ՝ առաջինը գրաբարի քերականական իրողությունները ոչ պատահականորեն քննում է ոչ այլ ոք, քան օտար հայագետ Ֆրանչիսկոս Ռիվոլան։

Իր «Հայերեն քերականություն՝ չորս գրքից» աշխատության մեջ³, որ, իրոք «օտարազգի հեղինակների կողմից հայերենի քերականական կառուցվածքի ամբողջական նկարագրության առաջին փորձն էր»⁴, նա, ինչպես հավաստում է Գ. Զահուկյանը, ա) քննել է անվան և դերանվան քերականական հատկանիշները (կարգերը կամ ակցիդենցիաները), հատկապես՝ սեռը, հոլովը, թիվը, բ) հոլովների կազմից հանել է կոշականը և հայերենի համար ոչ թե նախորդ քերականների պես՝ վեց. այլ հինգ հոլով է ընդունել՝ անվանական (Nominativus), սեռական (Genitivus), արական (Dativus), հայցական (Accusativus), բացառական (Ablativus), գ) գործիականը բացառականի հետ մի հոլով է դիտել, որովհետև լատիներենում այն «հատուկ ձև չունի և արտահայտվում է բացառականի միջոցով»⁵, դ) ներգոյականը ևս բացառականի տարատեսակ է համարել, ե) հոլովների կազմության նկարագիրն է տվել՝ գտնելով, որ՝ «տրականը և՛ եզակի, և՛ հոգնակի թվում նույնն (նման—Ա. Մ.) է սեռականի հետ (մեղաւորի, մեղաւորաց), տրականը կազմվում է նաև ց նախդրով..., հայցականը նույնն (նման—Ա. Մ.) է ուղղականի հետ, որը ծառայում է հոգի տեղ» և հոգնակի թվում ք-ի փոխարեն ստա-

1 Այդ մասին տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 7—299։

2 F. Rivola, Grammaticae armenae libri quattuor, Milan, 1624։ Յբ. Ռիվոլանի այդ աշխատությունը չդրսնելով ո՛չ Մաշտոցի անվան Մատենադարանում, ո՛չ էլ ՀՀ որևէ գրադարանում՝ հոլովների վերաբերյալ նրա տեսակետները ներկայացնում ենք ըստ Գ. Զահուկյանի հիշյալ աշխատության տվյալների։

3 Գ. Բ. Զահուկյան, Խղվ. աշխ., էջ 104։

4 Նույն տեղում, էջ 15։

նում է ս (զսիւրուս. զէւանապարհս»⁵, գ) հոլովման տիպերը որոշել է ռուս հզակի սևոականի վերջավորություն»⁶ և այլն:

Կնահատելով այս ամենը՝ Գ. Զահուկյանը միաժամանակ քննադատաբար նշել է, որ Ֆր. Ռիվոլյան՝ ա) «որոշ հոլովածներ ձիշտ չի տալիս», բ) «որոշ հոլովների համար» տալիս է «մեկից ավելի ձևեր, եթե դրանք արտահայտում են լատինների միևնույն հոլովի իմաստային տարբեր առումներն ու կիրառական տարբեր արժեքները», գ) «չի կարողանում տարբերել գրաբարյան ձևերը ոչ գրաբարյան ձևերից՝ տալով դրանք խառը ձևով կամ պարզապես իբրև տարբերակներ (հմտ. ինձ և ինձի, մեմ և մեմի, իմում և սեռ. իմում), դ) «խառնում է տարբեր հոլովածները. այսպես, օրինակ, ստացական դերանունների սեռականի և տրականի համար տալիս է և՛ սեռականի, և՛ տրականի ձևերը (սեռ. իմոյ—իմում, բոյ—բում, տր. իմոյ—իմում, բոյ—բում)»⁷ և այլն:

Սակայն անկախ այս և նման սխալներից, որոնց մասին խոսել են և ուրիշները անցյալում⁸, Ֆր. Ռիվոլյան առաջին տպագիր քերականության հեղինակն է և, բոլոր դեպքերում, նրանով զգալի ծառայություն է մատուցել հայ քերականագիտությանը և գրաբարի բազմազան քերականական իրողությունների հետ նաև՝ հոլովների լուսաբանմանը:

Ֆր. Ռիվոլյանի հաջորդող երկրորդ լատինաբան քերականը, դարձյալ օտարազգի, Կղեմես Գալանտան է (1610—1666), որը 1645 թ. Հռոմում հրատարակած իր «Քերականական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստութիւն շահելոյ» աշխատության մեջ բոլորովին այլ կերպ է ներկայացրել հայերենի հոլովները:

Ի տարբերություն Ֆր. Ռիվոլյանի, որ կոչականը մերժելով հինգ հոլով էր ընդունում, հայերենի քերականության պատմության մեջ նա առաջինն է, որ դրա փոխարեն հոլովները տասն է համարել և ուղղակի նշել. «Հոլովք տասն: Առաջինն է ուղղական, որ Անուանական ասի: Իսկ մնացեալքն՝ հոլովականք, որք ասին Սեռական, Տրական, Կրողական, Կոչական, Առողական, Կործիական, Պատմական, Կացողական, Պարառական»⁹:

Եվ, այնուհետև, փորձելով հիմնավորել դա ու գտնելով, որ հոլովը անվան քերականական ոչ թե հինգ կամ վեց, ինչպես ընդունված էր երկար ժամանակ, այլ չորս կարգերից մեկն է («Պատահին ևս անուանն չորք. ձև, սեռ, թիւ, հոլով»), Կ. Գալանտան հոլովները երկու խմբի է բաժանել և նշել, որ «ի տասն առաջադասեալ հոլովիցն՝ չորքն յետինք ի հայումս միայն գտանին. ոչ ի լեզուս այլ աղգաց, որք առնուն զնոսա ի վեց առաջին մնացեալ հոլովիցն վերաբերութեամբ նախադրութեանց»¹⁰:

Նա միայն հայերենին հատուկ այդ չորս հետին հոլովներն է համարել առողականը (բացառականը—Ա. Մ., ինչպես՝ յԱղամայ), պատմականը՝ զ նախդրով (բացառականը—Ա. Մ., ինչպես՝ զԱղամայ), պարառականը (զ նախդրով գործիականը—Ա. Մ., ինչպես՝ զԱղամայ) և կացողականը (ներգոյականը—Ա. Մ., ինչպես՝ յԱղամայում, յԱղամ):

Դրանից բացի, հոլովների կառուցվածքը կամ ձևակազմությունը նկատի ունենալով՝ Կ. Գալանտան հոլովների նաև մի այլ տարբաժանում է կատարել՝ գտնելով, որ կան՝ ա) նախդրով կազմվող՝ նախդրային հոլովներ, որոնք են՝ առողականը (= բացառականը), պատմականը, պարառականը, տրականը—

⁵ Նույն տեղում, էջ 14—16:

⁶ Նույն տեղում, էջ 17:

⁷ Նույն տեղում, էջ 18—20:

⁸ Գ. Անտիքեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 161:

⁹ Կ. Գալանտան, Քերականական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստութիւն շահելոյ, Հռոմ, 1645, էջ 28ր:

¹⁰ Նույն տեղում:

նր, հայցականը, կաղցողականը, ե ք) առսնց նախդրի կազմվող աննախդիր հոլովներ, որոնք են՝ ուզղականը, սեռականը և կոշականը:

Նույն այդ եզանակով էլ ըստ առանձին հոլովումների նա ներկայացրել է մի շարք բառերի (Աղամ, անումն-անումն, բնութին-բնութին, բան-բան, հրաման-հրաման, մարմին-մարմին, կենդանի-կենդանի, ժամ-ժամ, կիւ-կանայ, աստղ-աստղ, տէր-տէր, հայր-հայր, օր-աւուր) հոլովումը, ինչպես, օրինակ՝

Եզակի	Հոգնակի
Ան. բան	բանք
Սեռ. բանի	բանից
Տր. ի բան, բանում, բանի	ի բանս, բանից
Լր. զբան	զբանս
Լոշ. ո՛վ բան	ո՛վ բանք
Առող. ի բանէ	ի բանից
Գործ. բանիւ	բանիւք
Պատմ. զբանէ	զբանից
Լաց. ի բանի, ի բանում	ի բանս
Պար. զբանիւ	զբանիւք

Այդպիսով՝ Կ. Գալանոսը իբրև հոլովանիչեր («հոլովից նշանակք») է դիտել նախդիրներն («նախադասք») ու հոլովական վերջավորությունները («ստորադասք») և ըստ այդմ էլ ցույց տվել ոչ միայն հոլովների կազմութիւնը¹¹, այլև՝ այն, թե նրանք ինչով են նման կամ տարբեր իրարից¹²:

Կ. Գալանոսը նույն կերպ է պատկերել նաև դերանվան հոլովները և այս դեպքում էլ նրա քերականական կարգերը ոչ թե շոքս, այլ վեցը համարելով («Արդ պատահին նմա վեց. սեռ, թիւ, հոլով, տեսակ, ձև, և դէմ»)՝¹³ հոլովական միանման հարացույցով ներկայացրել է նաև նա—նոքա, նոքին, այս—այսք, այսոքիկ, որ, ո՛վ, ո՞, զի՞նչ—որք, ոյք, ես—մեք, դու—դուք, ոմն, ոմ—ոմանք, ինն—ինքանք դերանունների հոլովումը, ինչպես, օրինակ.

Եզակի	Հոգնակի
Ան. ես, դու	մեք, դուք
Սեռ. իմ, քոյ	մեր, ձեր
Տր. ինձ, քեզ	մեզ, ձեզ
Լր. զիս, զքեզ	զմեզ, զձեզ
Լոշ. —, ո՛վ դու	—, ո՛վ դուք
Առող. յինէն, ի քէն	ի մէնչ, ի ձէնչ
Գործ. ինեւ, քեւ	մէօք, ձէօք
Պատմ. զինէն, զքէն	զմէնչ, զձէնչ
Լաց. յիս, ի քեզ	ի մեզ, ի ձեզ
Պար. զինեւ, զքեւ	զմէօք, զձէօք

Այստեղից կարելի է նկատել, որ նա կոշականը վերագրել է միայն դու դերանվանը և մյուսները ներկայացրել ինը հոլովով:

Կ. Գալանոսը անդրադարձել է նաև նախդիրների և բայերի հոլովառությանը կամ խնդրառությանը՝ մեծ մասամբ ճիշտ որոշելով, թե նրանք ինչ հոլովով արտահայտված խնդիրներ են պահանջում:

11 Նույն տեղում, էջ 46ր:

12 Նույն տեղում, էջ 81:

13 Նույն տեղում, էջ 48ր:

Այսքանով և ընդհանրապես հոլովների նկարագրությամբ Կ. Գալանոսը զգալապես առաջ է անցնում Ֆր. Ռիվոլայից և փաստորեն ստեղծում մի ուսմունք, որով և նա՝

ա) լատիներենի ազդեցությանը շենթարկվելով՝ Ծ-ի փոխարեն հայերենում 10 հոլով է ընդունում:

բ) գործիականը իբրև առանձին, ինքնուրույն հոլով է ճանաչում:

գ) հոլովները որոշում է նրանց ինչպես կազմությամբ, այնպես էլ արտահայտած իմաստով կամ նշանակությամբ:

զ) տարբերում է հոլովների ուղիղ (ուղղական) և թեք՝ փոփոխական («հոլովական») ձևերն իրարից:

ե) ինչպես անվան, այնպես էլ դերանվան հոլովները ներկայացնում է մի շարք բառերի հոլովմամբ՝ իր իսկ կիրառած հարացույցին համապատասխան:

Այս ամենով հանդերձ, Կ. Գալանոսի հոլովական ուսմունքը բոլոր դեպքերում պարզ նկարագրական բնույթ ունի և նույնպես զերծ չէ սխալներից, մերժելի մեկնություններից և բացատրություններից:

Եվ, այնուամենայնիվ, Ֆր. Ռիվոլայից առաջ անցնելով՝ Կ. Գալանոսը շատ ավելի լայնորեն է լուսաբանել գրաբարի հոլովները և իր հերթին հիմքեր ստեղծել նրանց տեսության հետագա զարգացման համար: Դա պարզորոշ արտահայտված է նախ և առաջ Ոսկան Երևանցու (1614—1673) «Քերականութեան գիրք» աշխատության¹⁴ մեջ, որտեղ նա՝

ա) գտնելով, որ «Անուն նշանակ է զէութիւն իրադ. և այսպէս անուն է նշան էութեան»¹⁵, նախորդների պես իրավացիորեն այն հոլովական (=փոփոխական) խոսքի մաս է ըմբռնել («Անուն է մասն բանի հոլովական, նշանակող զէութիւն իւրաքանչիւրոյ իրի ենթադրութեամբ»)¹⁶:

բ) անվան քերականական կարգերը՝ 7-ը և հոլովն էլ գրանցից մեկն է համարել («Ի քանիսն բաժանին անուանք. յևթն: Ոյք են. էութիւն, ֆանակ, թիւ, կարգ, սեռ, կերպաւորութիւն, հոլով»)¹⁷:

գ) ի տարբերություն Ֆր. Ռիվոլայի և Կ. Գալանոսի, հայերենի համար ոչ թե 5 կամ 10, այլ 8 հոլով է ընդունել և դրանք ներկայացրել որոշ փոփոխված անուններով («Որքանք են անկ [հոլովները—Ա. Մ.] անուանց. ոյք: Ուղղական, սեռական, տրական, հայցական, հոշական [կոշական—Ա. Մ.], գործիական, կայական [ներգոյական], սկզբնական [բացառական—Ա. Մ.]»)¹⁸:

դ) հոլովը անկ («թեքում») է անվանել՝ որոշելով այն անվան կրած փոփոխությամբ («Զի՞նչ է անկ: Անկ է զանազանութիւն անուան ներ վերջնումն. կամ անկումն ասացման, ներ նոյնում թուում, հիղան. Պետրոս. Պետրոսի .սում»)¹⁹:

ե) ուղիղ ձևի՝ ուղղականի և փոփոխված ձևերի՝ թեք հոլովների կազմությունը, կապն ու փոխհարաբերությունն է նշել՝ ասելով. «Ուղղական կամ անուանոր ասի, ոչ զի զայլմէ անկանի, այլ զի ուղիղ անուանումն էութեամբ, ինքեամբ է: Իսկ այլքն անկք ասին, զի անկանին յուղիղ նշանակելոյ: Ասի սեռական ի սերելոյ, կամ զի նախկին ծնանի յուղղականէն: Ասի տրական յընծայելոյ, քանզի ում որ ինչ տուի, դնի նայնպիսում հոլովում: Ասի հայցական ի հայցելոյ, զի զոր ինչ հայցմք, նայնպիսում հոլովում ներփակմք: Ասի գործիական, քանզի որով գործեմք, նայնպիսում հոլովում դնեմք:

¹⁴ Ո ս կ ա ն Ե Ր և ա ն ց ի, Քերականութեան գիրք. Համառոտիւք ծայրաքաղ արարեալ յազգս մանկանց և նորավարժից կրթութեան, Ամստերդամ, 1666:

¹⁵ Նույն տեղում, էջ 5:

¹⁶ Նույն տեղում, էջ 6:

¹⁷ Նույն տեղում, էջ 6—7:

¹⁸ Նույն տեղում, էջ 11:

¹⁹ Նույն տեղում:

Ասի կայական, քանզի նորում զիր ինչ կայացեալ գիտեմք, դնենք նայնմ հոլովում: Ասի սկզբնական, զի յորմէ իր իմն սկսանի, ի նոյնում կամ անկում շարունակեմք²⁰:

զ) բացի դու-ից, դերանուններին նույնպես հատուկ չի համարել կոչականը և սրանց համար / հոլով է նշել. «Քանի՞ք են հոլովք դերանունանց. եօթն, ուսիրնքն՝ ես, իմ. ինձ. գիս. ինձ. յինչս. յիս»²¹:

է) ըստ տարբեր հոլովումների ներկայացրել է մի շարք բառերի (Աղամ, յան, պտուղ, արեգակն, անձն, կոբիւն, եղջրու, ծով, աստղ, հայր, կրն, օր) հոլովումը՝ եզակի և հոգնակի թվով:

ը) ավելի որոշ է ներկայացրել նախադրությունների խնդրառույթյունը՝ նշելով, թե որոնք են դործածվում սեռայանի (աւաջի, առանց, աղագաւ, զվնի, զինաւ, բարց, ի մէջ, ի ներհոյ, ի վերայ, ի վերոյ, ր ծեռս, յսաւ, յաղագս, յայնչոյս, սալս, վասն, փոխանակ և այլն), որոնք՝ արականի (յ, առ, հալաւաւ, դւմ, ընդդէմ, ներհակ, հանդէպ, յասդմաս, ըսաւ և այլն), որոնք՝ գործիականի (սասդեռն, շուրջ), որոնք՝ բացառականի (Բաց ի, վատ ր, գաղս ր, ծածուկ ի, առ ի), որոնք՝ ներգոյականի (ներ, նը, ըս, ք, որոնք՝ բացառականի և արականի (առ ի, ի), գործիականի և տրականի (ընդ), հայցականի և բացառականի (ըզ) հետ²²:

թ) նախորդների համեմատությամբ շատ ավելի հանդամանորեն է ներկայացրել նաև բայերի խնդրառույթյունը և բազմաթիւ օրինակներով ցույց տվել, թե ըստ իմաստի նրանք ինչ հոլով(ներ)ի հետ են դործածվում կամ ինչ հոլով(ներ)ով արտահայտված խնդիրներ են պահանջում:

Այս ամենով հանդերձ, Երևանցու հոլովական ուսմունքը նույնպես անթերի չէ և ոչ էլ դերձ սխալներից և վրիպումներից: Նկատելի է, որ, օրինակ, հոլովների համար մի հաստատուն, միտսնակսն անվանակարգ չի կիրառել և, ասենք, ներգոյականը մեկ՝ կայական, մեկ այլ ասունով է ներկայացրել, լատինարանության ազդեցությամբ հոլովված բառերի շարքում ուրիշ շինծու, արհեստական ձևեր է գործածել, հոլովակերտ նախդիրները և հոլովառու նախադրությունները չի տարբերել և այլն:

Անկախ այս ամենից, Ոսկան Երևանցու «Բերականութեան գիրք -ը, զուտ հայերենով գրված առաջին ապագիր Երականութեանը լինելով, քերականական բազմազան իրողությունների հետ ղգալի նպաստ է բերել նաև հոլովների լուսաբանման գործին:

Ո. Երևանցուց հետո հայերենի հոլովները քննության է առել Հովհաննես Հոլովը (1635—1691) իր «Ձտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական» աշխատության մեջ²³, որը բաղկացած է երկու մասից, առաջինը լատիներենի քերականություն է՝ շարադրված հայերեն (Քերականութիւն լաթինական հայերէն շարագրեցեալ), իսկ երկրորդը՝ «Հայկական քերականութիւն» է՝ հայերեն և ապա՝ լատիներեն լեզուներով:

Պրանք, սակայն, իրապես սերտորեն կապված են իրար հետ. մի դեպքում Հովհ. Հոլովը ներկայացնում է լատիներենի ոչ միայն գոյականների, այլև դերանունների հոլովները՝ իրենց համապատասխան հայերեն արտահայտութիւններով, ինչպես, օրինակ.

20 նույն տեղում, էջ 11—12:

21 նույն տեղում, էջ 15:

22 նույն տեղում, էջ 33:

23 Յ ո վ հ ա ն ն է ս Կ ո ս տ ա ն դ յ ն ու պ ո լ ո ն ց ի Հ ո լ ո վ, Հ տ ու թ իւ ն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հոռմ, 1675:

Եզակի			Հոգնակի	
Ան.	hoc tempus	որ է ժամանակ	tempora	ժամանակ
Սեռ.	temporis	որ է ժամանակի	temporum	ժամանակաց
Տր.	tempori	որ է ժամանակի և ի ժամանակ	temporibus	ժամանակաց և ի ժամանակս
Հա.	tempus	որ է զժամանակ	tempora	զժամանակս
Կոչ.	o tempus	որ է ով ժամանակ	o tempora	Օ ժամանակ
Բաց.	a tempore	որ է ի ժամանակէ	a temporibus	ի ժամանակաց ²⁴ :
Ան.	ego	այսինքն ես	nos	մեք
Սեռ.	mei	իմ	nostrum, nostri	մեր
Տր.	mihi	իմն	nobis	մեզ
Հա.	me	զիս	nos	զմեզ
Բա.	a me	յինէն	a nobis	ի մէնք,

մյուս դեպքում՝ «Հայկական քերականութեան» մեջ նա զուտ հայերենի հոլովներն է պատկերում՝ հետևելով մեծ մասամբ նախորդ լատինաբան քերականներին: Եվ իրո՞ք. իբրև լատինաբան քերական, Հով. Հոլովը՝

ա) Կ. Գալանոսի պես գրաբարի հոլովները նույնպես տասն է համարել՝ ասելով. «Հոլովք անունանց են տասն, որք և են այսոքիկ. Անուանական, Սեռական, Տրական, Հայցական, Բացական, Պատմական, Գործիական, Պարտական, Ներգոյական, Կոչական»²⁵:

բ) նույն այդ կարգով ներկայացրել է մի շարք բառերի (միտ—միտք, նիք—նիթք, ոսկի—ոսկիք..., այլև՝ ոմն, ոք, իմն, ոք, ո՞վ, ո՞ր—ո՞րք) հոլովումը²⁶:

դ) Հոլովները սահմանել է ըստ նշանակության. «Առաջինն կոչի անուանական, զի ընդարձակապէս և ուղղապէս զէութիւնս իրաց ըստ անուան նշանակէ, որգոն մարդ, հրէշտակ, երկին, երկիր: Քանզի մինչ լսեմք մարդ, թարց այլոյ ուրուք մտածման զկենդանի բանականն է ի միտս բերեմք:

Երկրորդն կոչի սեռական, զի զայնոսիկ որք պատկանին առ իւրաքանչիւր էութիւնս կամ էակս սեռօրէն նշանակէ, որգոն մարդոյ, հրէշտակի, երկնի, երկրի: Քանզի մինչ լսեմք մարդոյ, ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ, այլ իբր տէր, կամ ունօղ, կամ ստացօղ այլոց իրաց:

Երրորդն կոչի տրական, զի զենթակայս կամ զառարկայս առից տրողականաց կամ դիմողականաց և կամ ձգտողականաց նշանակէ, որգոն ցմարդ, ցհրէշտակ, առ յերկինս, ի յերկիր, քանզի մինչ լսեմք ցմարդ, ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակայ, տալոյ, դիմելոյ, ձկտելոյ և այլն:

Չորրորդն կոչի հայցական, զի զենթակայս կամ զառարկայս առ իս հայցողականաց կամ խնդրողականաց և կամ ախորժողականաց նշանակէ, որգոն ցմարդ, ցհրէշտակ, զերկին, զերկիր, քանզի մինչ լսեմք զմարդ, ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակայ հայցելոյ, ախորժելոյ, խնդրելոյ և այլն:

Հինգերորդն կոչի բացական, զի ենթակայս առից բացբարձականաց կամ ասողականաց և կամ սկզբնականաց նշանակէ, որգոն ի մարդոյ, ի հրէշտակէ, յերկրէ. քանզի մինչ լսեմք ի մարդոյ, ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակայ բացբառնալոյ, առնալոյ, սկսելոյ և այլն:

²⁴ Սույն տեղում, էջ 35—36:

²⁵ Նույն տեղում, էջ 131:

²⁶ Նույն տեղում, էջ 4—5:

վեցերորդն կոչի պատմական, զի զենթական առից վիպողականաց կամ ամբաստանողականաց նշանակէ, որգոն զմարդոյ, զհրեշտակէ, զերկնէ, զերկրի, քանզի մինչ լսեմք զմարդոյ, ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ, այլ իբր ենթական պատմելոյ, ամբաստանելոյ և այլն:

Նոթներորդն կոչի գործիական, զի զենթական առից արհեստականաց կամ դործնականաց նշանակէ, որգոն մարդով, հրեշտակի, երկնի, երկրաւ, քանզի մինչ լսեմք մարդով, ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ, այլ իբր ենթական գործիական:

Ութներորդն կոչի պարտական, զի զենթական առից շրջապատողականաց կամ փարողականաց նշանակէ, որգոն զմարդով, զհրեշտակի, զերկնի, զերկրաւ, քանզի մինչ լսեմք զմարդով, ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ, այլ իբր ենթական շրջապատելոյ, պարելոյ, փարելոյ և այլն:

Իններորդն կոչի ներգոյական, զի զենթական առից կամ կրից պարունակեցելոց նշանակէ, որգոն ըն մարդով, ըն հրեշտակով, յերկնը, յերկրի, քանզի մինչ լսեմք ըն մարդով, ոչ իմանամք զմարդ իբր մարդ, այլ իբր ենթական պարունակող կամ ներկրող:

Տասներորդն կոչի կոչական, զի զենթական առից կրողականաց նշանակէ, որգոն ո՛վ մարդ, ո՛վ հրեշտակ, ո՛ր երկն, ո՛ր երկիր, քանզի մինչ լսեմք ո՛վ մարդ, ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ, այլ իբր ենթական կոչական²⁷:

դ) Հոլովների կազմության զանազան ձևերն է նշել և դրանք նույնպես կարևոր է համարել նրանց որոշման համար. «Զանազանութիւն Հեակերպութեանց հոլովիցն կայանայ կամ ի սկզբան կամ ըն վերջնում անուանց, որ ի ձևոն զանազանիչ նախադրութեանց և տարբերիչ վերջաւորութեանց զտասն հոլովս բաղկացուցանեն»²⁸:

և) Հոլովումները որոշել է անվան եզակի սեռականի վերջավորությամբ՝ գտնելով, որ նրանք լինում են 8 տեսակ (Հոլովումը հասարակի անուանցն են ութն, որոց առաջնոյն եզական սեռականն եզերի ի ի (բանի, մտի): Երկրորդի եզական սեռականն եզերի ի ոյ (նիւթոյ)...: Ութերորդի եզական սեռականն եզերի ի ու, որգոն ժամ, ժամուս²⁹:

զ) Հիմնականում ճիշտ է ներկայացրել նախադրությունների (-կապերի) խնդրառությունը և նշել, թե որոնք ինչ հոլովների հետ են գործածվում («Նախադրութեանց ոմանք խնդրեն զսեռական և են այսոքիկ... ի մէջ, զկի, զհետ, առաջի, վասն, յաղագս...», «Ոմանք խնդրեն զվերջահոլով տրական, և են այսոքիկ. ընդ, հետ, առըքեք, քարց, առանց, ըստ...»³⁰:

է) Մասնավոր իրողություններ է մեկնաբանել և, օրինակ, բայերի խընդրառությունը պատկերելիս նշել, թե նրանցից որոնք են, որ ձգմի միայն հոլով և որոնք են, որ ձգազումս հոլովս պահանջեն³¹:

Եվ, այնուամենայնիվ, Հովհ. Հոլովը առանձնապես շատ բան չի հավելում նախորդ քերականների մեկնություններին և հոլովներն էլ հիմնականում ներկայացնում է այնպես, ինչպես Կ. Գալանտն է ներկայացրել:

Իսկ դա էլ բացատրվում է առավելապես լատինաբան քերականների աշխատությունների բնույթով, այն բանով, որ նրանք գրաբարի ոչ թե այս կամ այն իրողությունը, այլ ամբողջ քերականական կառուցվածքն են քննության առել և, բնականաբար էլ, զբաղվել նրա հիմնական օրենքների ու կանոնների լուսաբանությամբ:

27 Նույն տեղում, էջ 132—133:

28 Նույն տեղում, էջ 133:

29 Նույն տեղում, էջ 4:

30 Նույն տեղում, էջ 173:

31 Նույն տեղում, էջ 178:

Պաշտոնակերպ ոչ պաշտոնականորեն, այդպես է նաև Սիմեոն Զուղայեցու («—1657») «Գիրք որ կոչի քերականութիւն»⁸² աշխատութիւն մեջ, որը թեև լույս է տեսնում 1725 թ., բայց շատ ավելի վաղ է գրվել և ձեռագիր վիճակում ևս կարելի էր խաղացել գրաբարի ուսուցման գործում:

Հիմնականում հավատարիմ մնալով ժամանակի քերականագիտական բմբուններին ու մեկնաբանություններին՝ Ս. Զուղայեցին իր հերթին՝

ա) Հայերենում ընդունել է Յ խոսքի մաս («Եւ մասունք բանի են ութն: Անուն, բայ. ընդունելություն, դերանուն, յօդ, նախդիր, մակբայ, շաղկապ») ⁸³, բ) Անունը համարել է փոփոխվող խոսքի մաս («Անուն է մասն բանի հոլովական») ⁸⁴:

գ) Անվան համար 6 քերականական կարգ է նշել («Եւ հետին անուան վիցք. քանակք, սերք, ձևք, տեսակք, թիւք, հոլովք») ⁸⁵:

դ) Հոլովները նույնպես տասն է համարել («Հոլովք տասն. ուղղական, սեռական, տեսական, գործիական, հայցական, սկզբնական, պատմական, ներգոյական, արտագոյական, կոշական») ⁸⁶:

ե) Հոլովման յոթ տեսակ կամ եղանակ է նշել և հիշյալ ձևով ներկայացրել մի շարք բառերի ակնակունք, բնութիւն-բնութիւնք, գառն-գառնք, աստղ-աստղք, ուստի-դստերք, եղբայր-եղբարք, գաւակ-գաւակք, ընտանի-ընտանիք) հոլովումը, ինչպես՝ ուղղ. երկիր, սեռ. երկրի, ար. երկրի, գործ. երկրաւ, հայց. ղերկիր, սկզբն. յերկրէ, պատմ. ղերկրէ, ներգ. յերկրի, արտագոյ. ղերկրաւ, կոշ. ո՞վ երկիր:

զ) Տասը հոլով է վերագրել նաև դերանվանը («Հոլովք տասն են ըստ անուան») ⁸⁷: հոլովելով նույնպես մի շարք բառեր, ինչպես՝ ուղղ. ես-մեք, դու-դուք, սեռ. իմ-մեր, քոյ-ձեր, ար. ինձ-մեզ, քեզ-ձեզ, գործ. ինչ-մեյ, հայց. դիս-զմեղ, զքեղ-զձեղ, սկզբն. յինչն-ի մէջ, ի քէն-ի ձևն, պատմ. զինչն-զմէջ, զքէն-զձէջ, ներդ. յիս-ի մեզ, ի քեզ-ի ձեզ, արտագոյ. ղինչն-զմեյ, ղքեւ-զձեւ, կոշ. —, դու-ո՞վ դուք:

է) Իրոշ հոլովների՝ տրականի և հայցականի համար երկակի ձևեր է նշել, ինչպես՝ ընտանեայ-ընտանի, ընտանեայ-ընտանիս, քղքոյ-ի թուղթ, քղքոյ-ի թուղթս, գրնաւի-զընդանիս, ընտանի-ընտանիս և այլն:

ը) Ներկայացրել է նախադրությունների խնդրառությունը և ընդունված կարգով նշել, թե նրանցից որոնք են, որ, օրինակ, «զսեռական առնուն» (առնալի, զկնի, զհետ, յետ, ի վերայ, վասն, յաղագս և այլն), որոնք են, որ «զտրական առնուն» (մօտ, մերձ, հեռւ և այլն) ⁸⁸:

թ) Հոլովների կրրառություններն է քննել և մասնավորաբար նշել, որ, օրինակ, 1) սեռականը իրրե «ստորոգեալ և յատկացուցիչ» դործածվում է բոլոր անունների հետ, 2) գործիականը իր նշանակության համապատասխան զրեթե բոլոր բայերի հետ է գործածվում, 3) ներգոյականը «իրաց և իրակութհանց» տեղ ցույց տալով՝ ես շատ բայերի հետ է գործածվում, 4) կոշականը «անկատար բան նշանակի», ուստի և «ոչ ունի հոլով ինչ» և այլն:

Հետևելով Ս. Զուղայեցուն՝ հայերենի հոլովներն ու հոլովական իրողությունները հիմնականում նույն կերպ է նկարագրել նաև քերական Հովհաննես Զուղայեցին՝ Մրքուզը (1643—1715) իր «Համառօտ քերականութիւն և տրամարանութիւն» աշխատութեան մեջ ⁸⁹:

⁸² Սիմեոն Զուղայեցի, Գիրք որ կոչի քերականութիւն, Կ. Պոլիս, 1725:

⁸³ Նույն տեղում, էջ 25:

⁸⁴ Նույն տեղում:

⁸⁵ Նույն տեղում, էջ 29:

⁸⁶ Նույն տեղում, էջ 35:

⁸⁷ Նույն տեղում, էջ 117:

⁸⁸ Նույն տեղում, էջ 201:

⁸⁹ Յովհաննէս Զուղայեցի, Համառօտ քերականութիւն և տրամարանութիւն, Ամստերդամ, 1711:

Նա նույնպես՝ տնունը «մասն բանի հոլովական», նրա օերականական կարողորդ՝ վեց («ֆանակ, սերֆ, ձևֆ, տեսակֆ, բիւֆ, հալովֆ»), անվան հոլովները՝ տասր (ուղղական, սեռական, տրական, գործիական, հայցական, սկզբնական, պատմական, ներգոյական, արտադրական, կոչական), դերանվանը (չհաշված դու-ն) ինն է համարում, հոլովումները որոշում է «ըստ սեռականին» և տասր (-ան, -եան, -ին, -եղ, -եր, -օր, -ի, -ոյ, -այ, -ու) տեսակ նշում, մի շարք գոյականների և դերանունների հոլովումն է տալիս համանման հարացույցով, ինչպես՝ ուղղ. դուռն-դրունք, սեռ. դրան-դրանց, տր. դրան կամ ի դուռն-դրանց կամ ի դրունս, գործ. դրամբ-գրամբ, հայց. դուռն-դրունո, սկզբն. ի դրանէ-ի դրանց, պատմ. դրանէ-գրանց, ներգ. ի դրան-րն դրունս, արտագ. գրամբ-գրամբք, կոչ. ո՞վ դուռն-ո՞վ դրունք. ուղղ. ոմն-ոմանք, սեռ. ուրումն-ոմանց, տր. ոմնմն-ոմանց, յոմանս, գործ. ոմամբ-ոմամբք, հայց. դոմն-դոմանս, սկզբ. յոմնմնէ-յոմանց, պատմ. դու-մնմնէ-դոմանց, ներգ. ն ոմնմն-նր ոմանս, արտագ. դոմամբ-դոմամբք, կոչ. -:

Ի տարբերություն նախորդ քերականների և հակառակ ձով: Ջուդայեցու, դրսի ինքնուրույնություն է հանդես բերել քերական նախատուր կարենցին՝ էրդումցին (1666—1740): Նա աշխատել է դուրս դալ հոլովներն ու հոլովական համակարգին վերաբերող միօրինակ, երբեմն նաև խիստ տարատար մեկնարանումներից և նաև ինչ-որ շարքով նոր խոսք առել նրանց մասին:

Եվ իրոք, իր «Դիրք քերականութեան» աշխատությունը յուրս է տեսել 1696 թ. Ս. Ջուդայեցու ու Հովհ. Ջուդայեցու քերականություններից առաջ, և ժամանակագրական առումով ավելի կարևոր դեր է խաղացել նախատուր կարենցին՝

ա) Անվան քերականական կարգերը ութն է համարել՝ գործածելով ոչ թե «հետևումն», այլ՝ «պարագայք» անվանումը (թէ ոյր և քանի իցեն պարագայք», «Պարագայք անուանից են ութ և են այսոքիկ. ձև, սեռ, բիւ, հալով, հոլովումն, համաձայնութիւն, հսովառութիւն և տեսակ»)՝⁴⁰:

բ) Հոլովները որոշել է անվան կրած փոփոխության ձևով ու նշանակությամբ և բնդունել տասր հոլով՝ ասելով. «Հոլովք անուանց են՝ վանագան յանոի նոյնոյ անուան. ի մեղ հոլովք տասն են, զի գնոյն ահուան՝ զտասն մտածմունս առնել կարեմֆ (ընդգծումը իմն է—Ա. Մ.)»⁴¹:

գ) Հոլովները ներկայացրել է մի փոքր այլ անվանումներով ու շարակարգով և ըստ դրանց էլ նշել, որ «Եթէ մտածեմք» հոլովը «Իբրև զայն, զոր անուանակոչեմք, հոշեմք զնա գանուանսկան: Եթէ մտածեմք իբրև զայն, որոյ է իր ինչ, հոշեմք և կոչեմք սեռական: Եթէ մտածեմք իբրև զայն, որում տամք զիր ինչ, ասեմք տրական: Եթէ մտածեմք իբրև զայն, որոյ վերայ լինի ներգործութիւն մեր, կոչեմք կրողական: Եթէ մտածեմք իբրև զայն, զոր կոչեմք, կոչական ասեմք: Եթէ նկատեմք իբրև զայն, յարմէ ահումք, անուանեմք արողական: Եթէ նկատեմք իբրև զայն, որով զարծեմք, հործիական կոչեմք: Եթէ նկատեմք իբրև զայն, զորմէ պատմեմք, պատմական կոչեմք: Եթէ նկատեմք իբրև զայն, յորում իր ինչ զոյ և կայ, կացողական ասեմք: Եթէ նկատեմք իբրև զայն, զորով շրջեմք, ասեմք պարառական»⁴²:

դ) Դերանունների բնութագրական կարգերը՝ ութ, հոլովներն էլ թեև նույնպես տասն է համարել, բայց միաժամանակ նշել է, որ «կոչականն շունին համայնք դերանուանք, այլ միայն դուն և դուֆն»⁴³:

ե) Ինչպես անունների, այնպես էլ դերանունների հոլովումների որոշման համար հիմք է ընդունել սեռականի կազմությունը՝ ասելով. «Հոլովումն

40 Խ. Կարենցի, Դիրք քերականութեան, Լիվոնո, 1696, էջ 53:

41 Նույն տեղում:

42 Նույն տեղում:

43 Նույն տեղում, էջ 64:

անուանց ի յեզականս ի սեռականէն ճանաչի, ոմանք յոգնականէն»⁴⁴. «Հոլովմունք դերանուանցն ինն են և սեռականէ ճանաչի»⁴⁵,

զ) Ոչ միայն իր հերթին տարբեր նախադրությունների հոլովառությունն է նշել, այլև աշխատել է բացահայտել դրա էությունը և հիմնավորել, թե ինչու զանազան նախդիրներ զանազան հոլովներ են պահանջում («Հոլովառութիւն է հոլովապահանջութիւն նոցին, այսինքն զանազան նախդիրք զզանազան հոլովս պահանջեն») ⁴⁶: Այս ամենը և, մանավանդ, հոլովների պարզ սահմանումները ցույց են տալիս, որ «Հոլովների ըմբռնման հարցում Կարնեցին» ոչ թե «անհետևողականութիւն է թույլ տալիս»⁴⁷ և կամ «Հոլովների թվի, անվանումների հարցում հետևում է Գալանոսին՝ մասնակի տարբերություններով»⁴⁸, այլ հանդես է բերել իրո՞ք որոշակի ինքնուրույնություն և նպաստել հոլովական ուսմունքի զարգացմանը: Իսկ սա էլ իր հերթին վկայում է, որ զնալով առաջադիմում է հայ քերականագիտությունը և նշանավորվում քերականական նոր երկերով: Եվ դրանցից մեկը պետք է համարել, անշուշտ, եվրոպացի նշանավոր հայագետ Յոհան Յոսիմ Շրյոդերի (1680—1756) «Արամեան լեզուին գանձ» («Thesaurus linguae armenicae») աշխատությունը, որը հրատարակվել է 1711 թ. լատիներեն և իսկապես շատ մեծ դեր է խաղացել հայագիտության զարգացման պատմության մեջ⁴⁹, Այդ աշխատության մեջ, որի հիմնական մասում ներկայացվում է գրաբարի, իսկ համառոտ մասում՝ քաղաքացիական (իմա՝ նոր) հայերենի քերականությունը՝ աշխարհաբարյան մի շարք նմուշներով հանդերձ, Յո. Շրյոդերը՝

ա) Ինչպես լատինաբան գրեթե բոլոր քերականները, ընդունել է գրաբարի տասը հոլով. «Անունների հոլովները տասն են («Casus nominum sunt decem»). Nominativus—Անունական, Genitivus—Սեռական, Dativus sive Incremeti sive Praefixi—Տրական կամ Դիմողական կամ Բաշխողական, Accusativus—Հայցական, Vocativus—Կոչական, Ablativus—Առողական, Narrativus—Պատմական, Commorativus—Ներգոյական, Instrumentali—Գործիական և Circumlativus—Շրջակայական»⁵⁰:

բ) Բացի անվանականից՝ ուղղականից, հոլովները կոչել է նաև այլ՝ սեռականը՝ «սեռական», «հայրական», տրականը՝ «դիմողական», «բաշխողական», հայցականը՝ «խնդրողական», «կրողական», կոչականը՝ «հոչական», «ձայնական», առողականը (բացառականը)՝ «սկզբնական», պատմականը՝ «ճառական», «վիպասանական», գործիականը՝ «կերպական», «եղանակական», «առաքական», պարառականը՝ «արտագոյական», «շրջակայական», ներգոյականը՝ «կացական» անուններով՝ վկայելով այն մասին, որ տակավին հոլովների համար մի հաստատուն կամ միասնական անվանակարգ չէր ստեղծվել:

դ) Հստ տասը հոլովների ներկայացրել է մի շարք՝ ինչպես գոյականների, այնպես էլ դերանունների հոլովումը՝ եզակի և հոգնակի թվերով՝ ավելի պարզ դարձնելով նրանց պատկերը⁵¹,

⁴⁴ Նույն տեղում, էջ 55:

⁴⁵ Նույն տեղում, էջ 65:

⁴⁶ Նույն տեղում, էջ 101—105:

⁴⁷ Գ. Բ. Զ ա հ ու կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 168:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում, էջ 36:

⁵⁰ Yoh. Yoachim Schröderi, Thesaurus linguae armenicae (Գոհան աբամեան լեզուին), Amsterdam, 1711, էջ 80:

⁵¹ Յ ո. Շ ռ յ ո ղ ժ ր, նշվ. աշխ., էջ 59—85, 86—97:

դ) Հայ քերականության պատմության մեջ առաջինն է նկարագրել արեւելահայ աշխարհարարի հոլովները և դրանք նույնպես տասը համարելով՝ նշել, թե որոնք են, որ ձևով են նման իրար⁵²:

Հետեւելով Յո. Շրյոդերին՝ գրաբարի հոլովները գրեթե նույն կերպ է պատկերել Հակոբ Վիլլոզը իր «Բառգիրք հայկական լեզուի» աշխատության⁵³ ներածության մեջ:

Ընդունելով, որ անվան հոլովները իրոք տասն են („Declinationes nominum sunt decem“) — Nominativus — Անուանական, Genitivus — Սեռական, Dativus — Տրական, Accusativus — Կռողական, Vocativus — Կոչական, Ablativus — Առողական, Narrativus — Պատմական, Instrumentalis — Գործիական, Circumlativus — Շրջակայական, Commorativus — Կարողական, նա դրանք ցուցադրել է մի շարք բառերի հոլովմամբ՝ եզակի և հոգնակի թվերով, ինչպես օրինակ. nom. հիմն-հիմունք, gen. հիման-հիմանց, dat. հիման, ի հիմն-հիմանց, ի հիմունս, accus. գմբմ-գհիմունս, voc. ո՛վ հիմն-ո՛վ հիմունք, ablat. ի հիմանէ-ի հիմանց, narr. զհիմանէ-զհիմանց, instr. հիմամբ-հիմամբք, circum. զհիմամբ-դհիմամբք, commior, ի հիմն, ի հիման-ի հիմունս:

Միայն նկատելի է, որ Վիլլոզը բացառել է կոչականը, սլատմականը, պարառականը և կարողականը որոշ բառերի (ծով, մարմին, բան) հոլովական հարացույցում՝ կասկածի տակ առնելով հավանաբար նրանց իսկությունը⁵⁴:

Այսպիսով, կարելի է ասել, տասը հոլովի տեսակետը դառնում է վիճահարույց, ե առաջինն էլ նրան փաստորեն հակադրվում է Մխիթար Սեբաստացին (1676—1749) 1727 թ. հրատարակած իր «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց» աշխատությամբ: Ի տարբերություն Յո. Շրյոդերի, նա այդտեղ տասի փոխարեն արեւմտահայ աշխարհաբարի համար ընդունում է վեց (6) հոլով՝ ներկայացնելով դրանք ուղղական (հաց-հացեր), սեռական (հացի-հացերու), տրական (հացին-հացերու), հայցական (հացը-հացերը), բացառական (հացէն-հացերուն), գործիական (հացով-հացերով) անվանականներով ու հաջորդականությամբ⁵⁵:

Այստեղ շնոսելով այդ մասին, պետք է ասել, որ գրարարի դեպքում, սակայն, նա շարունակել է հետեւել նախորդ քերականներին և հոլովները նույնպես տասը համարել՝ իր հերթին նշելով, որ «Հոլովք անուանց են զանազանք շրջաբերմունք միոյ և նոյնոյ անուան և են տասն», «Հոլովմունք անուանց են զանազանութիւնք, և պէսպիսութիւնք վերջաւորութեանց սեռականաց»⁵⁶, որ անվան քերականական կարգերը վեցն են, և հոլովն էլ դրանցից մեկն է («Պարագայք անուանց ասին այնոքիկ, որք իբրու պարառեալք շուրջ կան զանուամբ իւրաքանչիւրով, և են վեցք. այսինքն՝ սեռ, ձև, տեսակ, թիւ, հոլով և հոլովումն»)⁵⁷, որ տարբեր նախադրություններ պահանջում են տարբեր հոլովներ («Ումանք խնդրեն զհոլովն սեռական», «ումանք զվերջահոլով տրական», «ումանք զհոլովն հայցական»)⁵⁸, որ հոլովի քերականական կարգը

⁵² Ա. Ս. Մարգարյան, Աշխարհարարի հոլովների ըմբռնումն ու լուսարանությունը վաղ շրջանի քերականություններում (Պատմա-բանասիրական հանդես, 1996, № 1):

⁵³ Yacobo Villote, Dictionarium novum Latino-armenium (Բառգիրք հայկական լեզուի), Roma, 1714:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Մխ. Սեբաստացի, Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց, Վենետիկ, 1727, էջ 9:

⁵⁶ Նույն տեղում, էջ 187:

⁵⁷ Նույն տեղում, էջ 233:

⁵⁸ Նույն տեղում, էջ 175—176:

հատուկ է նաև դերանուններին, որոնք ուրույն ձևով են հոլովվում և այլն, Մխ. Սեբաստացին ինչպես այդ ամենով, այնպես էլ րաջուցիչ մեկնություններով շատ ավելի պարզորոշ է պատկերել գրաբարի հոլովները և զարգացրել ու խորացրել նրանց ուսմունքը:

Նա հոլովների համար մշակել է մի հաստատուն կամ միասնական անվանակարգ ու շարակարգ. որ և կիրառություն է գտել հետագա շրջանի մի շարք քերականություններում, ինչպես, օրինակ.

	Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
Անվանական (ուղղ.)	խաչ	խաչք	ոմն	ոմանք
Սեռական	խաչի	խաչից	ուրումն	ոմանց
Տրական	խաչի, ի խաչ	խաչից, ի խաչս	ումնմն	ոմանդ
			առ ումնմն	առ ոմանց
Հայցական	զխաչ	դխաչս	զումն	զումանս
Բացառական	ի խաչէ	ի խաչից	յումնմնէ	յումանց
Պատմական	զխաչէ	զխաչից	զումնմնէ	զումանց
Գործիական	խաչիւ	խաչիւք	ումնմբ	ոմամբք
Պարտական	զխաչիւ	զխաչիւք	զումամբ	զումամբք
Ներգոյական	ի խաչի	ի խաչս	յումնմն	յումանս
Կոչական	ով խաչ	ով խաչք	—	—

Եվ կամ՝ հոլովը որոշելով հոլովվող բառի ձևով ու նշանակությամբ և ըստ այդմ էլ ասելով, թե «...տասն կերպիւ լինի շրջաբերումն միոյ և նոյնոյ անուան, ի հարկէ և նշանակութիւն նորին տասն կերպիւ պէսպիսանայ»⁵⁹, Մխ. Սեբաստացին ոչ միայն նրանցից յուրաքանչյուրի սահմանումն է տվել, այլև նշել է, թե որը ինչ է ցույց տալիս, և մեկը մյուսից ինչով է տարբերվում:

Այսպես, օրինակ, նա գտնում է, որ «Առաջինն ասի ուղղական կամ անունական, վասն զի անունն մինչ ի նախնական, կադութեան իւրում է՝ ուղղականապէս և անմիջաբար անուանէ զիրն, և գէութիւն նորին պարզապէս և ընդարձակաբար նշանակէ, որպէս մարդ, ձի, աղիւծ, սպիտակ և այլն»։ «Երկրորդն ասի սեռական, վասն զի անունն մինչ ուղղակի ոչ նշանակէ գէութիւն իրին, ըստ որում է էութիւն, այսինքն՝ ոչ նշանակէ զմարդն ըստ որում է մարդ, այլ ըստ որում է ունօղ իրաց ինչ, ասի սեռական»։ «Վասն որոյ եթէ սեռակաւն անունս այս մարդոյ ասիցի միայնակ, ոչ հանգուդանէ զմիտ մեր, այլ տաւ որոնել, և ասել զի՞նչն մարդոյ: Եւ յորժամ ասիցի՝ լեզուն մարդոյ կամ ձեռն մարդոյ և այլն, յայն ժամ հանգչի ի միտ մեր»⁶⁰։ «Երրորդն կոչի տրական, վասն զի անունն մինչ ոչ նշանակէ անմիջապէս գէութիւն իրին ըստ որում է էութիւն, այլ ըստ որում է իմն ըղձալի կամ հայելի, կամ դիմելի և կամ նմին իր ինչ տալի, ասի տրական...»։ «Չորրորդն կոչի հայցական, վասն զի անունն յորժամ ուղղակի ոչ նշանակէ գէութիւն իրին, այլ ըստ որում նոյն էութիւն է հայցելի, խնդրելի, կամելի, սիրելի և կամ ատելի, ասի հայցական»⁶¹,

⁵⁹ Մխ. Սեբաստացի, Քերականութիւն որարառի լեզուի Հակագեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 243:

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ Նույն տեղում:

Մխ. Սերաստացին նույն կերպ է մեկնաբանել նաև մյուս հոլովները և թեև բոլորը միասին նույնպես տասն է համարել, բայց զգալի շահով սուաջ է անցել նախորդ բերականներից և «աստեղմե ետքը ավելի կարգավորիչ քերականություն» ստեղծելով⁶² մեծապես նպաստել հայ բերականագիտական մտքի դարգացմանը:

Իվ դա մենք արտահայտված ենք տեսնում անգամ Մխ. Սերաստացուն ժամանակակից Բաղդասար Դպիրի (1683—1768) «Պարզարանություն քերականության կարճառուտ և դիրիմաց» երկհատորանոց աշխատության⁶³ մեջ, որտեղ նա՝

ա) նշում է, որ հոլովները կերպավորվում են երկու եղանակով՝ «այլևայլ վերջաորոշեամբք և քանի մը նախդրիւք»⁶⁴:

բ) Դրանցից «ստույգ» հոլովներ է դիտում զուտ վերջավորությամբ արտահայտվող հոլովները. «այն է ստույգ հոլով որ իւր գաղափարաւն թաւալի (ընդգծումը մերն է—Ա. Մ.). այս է՝ վերջին հոլովի որպէս սեռականն և գործիականն և նմանք»⁶⁵:

դ) Բոլոր հոլովները միասին նույնպես տասն է համարում՝ գտնելով, որ «Հոլովք անուանց են այնք, որք շրջաբերեն զանունն ի զանազան ձևակերպութիւնս և ի պէս-պէս նշանակութիւնս և են տասն. ուղղական, սեռական, զործիական, արտագոյական, հայցական, պատմական, սկզբնական, տրական, ներգոյական, կոչական»⁶⁶:

դ) Յուրաքանչյուր հոլովի նշանակությունն ու կիրառությունն է բացատրում, նշում, որ «Յորժամ դիրսն վասն իւր միայն յիշել կամիցիմք, դնել պարտիմք ուղղական, Պետրոս գնաց. Պօղոս մնաց. Ղուկասն եղև քահանայ, և կոչի ուղղական, դի դիրն ուղիղ և պարզ յիշէ առանց այլ ինչ նշանակութեան», «Յորժամ դիրսն ոչ վասն իւր, այլ վասն իւր եղելոցն յիշել կամիցիմք, պարտիմք դնել զնա սևոական՝ առելով՝ հայրն Պետրոսի, մայրն Պետրոսի և այլն: Եւ կոչի սևոական, դի սեռս ընդհանուր ասել է կամ պարունակող. որպէս սևոականս Պետրոսի, ամենայն ինչ Պետրոսի պատկանի՝ կարէ մտածիլ ընդհանրապէս»⁶⁷, «Յորժամ դիրն ոչ վասն իւր, այլ վասն այնր որ նովաւ լինի՝ յիշել կամիցիմք, պարտիմք դնել գործիական: Մոսէսիւ եղև այս գործ...»⁶⁸, «Յորժամ դիրն՝ անդ յիշեցեալ իրականութեան կրօղ իմանամք, պարտիմք դնել զնա հայցական: Պետրոս սիրէ Պօղոս: Մովսէս էհար գվէմն: Եւ կոչի հայցական, դի իրականութիւն որպէս թէ հայցէ զնա, դի ի նմա կայացի: Զոր և ոմանք կրողական անուանեն վասն գիրականութիւն կրելոյ որպէս ասացաք»⁶⁹, «Յորժամ իրն այնպէս նկատի, թէ դէպ ի նա դիմէ, պարտի դնիլ տրական: Ասեմ Պետրոսի կամ ցՊետրոս. նայիմ ի Պետրոս. գնամ առ Պետրոս: Եւ կոչի տրական, դի դիմեալ գործն ի նա որպէս թէ տի նմա»⁷⁰:

Այո դիպում ևս մի կողմ թողնելով մյուս հոլովներին վերաբերող նմանօրինակ ընդամենները, պետք է ասել, որ Բաղդասար Դպիրը թեև հոլովները ներկայացրել է մի այլ շարակարգով և մասամբ նաև շատ ավելի հին անուններով (սին համապատասխան համատախտակը), բայց նույնպես հիմնականում ճիշտ է ըմբռնել ու մեկնաբանել նրանց իմաստները, կիրառությունները, փոխադարձ կապերն ու հարաբերությունները, ինչպես նաև ճանաչողական, գործնական արժեքն ու նշանակությունը:

62 Գ. Ավետիսյան, Քերականություն հայկական, Վենետիկ, 1815, էջ 162:

63 Պարզարանություն քերականության կարճառուտ և դիրիմաց, Կ. Պոլիս, 1736:

64 Նույն տեղում, էջ 252:

65 Նույն տեղում, էջ 253:

66 Նույն տեղում, էջ 22:

67 Նույն տեղում, էջ 441—442:

68 Նույն տեղում, էջ 442:

69 Նույն տեղում, էջ 442—443:

70 Նույն տեղում, էջ 444:

Նա դա շատ ավելի որոշակի արտահայտել է արևմտահայերենով գրած իր «Գիրք բերականութեան» աշխատության մեջ. «Հոլով ըսելն՝ գլորիլ կամ թաւալիլ ըսել է, ինչպէս թէ քերէկն (անիւները) վեր ի վայր կու թաւալի: Եւ անունին հոլովիլն այն է, որ զանազան ձևով կու ձևաւորի: Ինչպէս որ անունս այս քաւ, քաւի կլլա. քաւի կլլա, և տահա այլ թիւրիւոյ. որ ամէնն քսան կլլա. տասն եզական, տասն յոգնական. և այս է ահա անունին հոլովիլն որ ամէն անուն տասն հոլովի վրա պիտի շրջի և տասը ձևով ձևաւորի, և որ ձևն որ պէտք ըլլա ի շարադրութեան, այն ձևն կու գրվի, որ խօսքն շիտակ լինի (ընդգծումը մերն է — Ա. Մ.)»⁷¹:

Զանոսեանով հայ բերականագիտության անցյալի նվաճումները և, ա-սկեր, խոսքի մասերը՝ 8 (անուն, բայ, ընդունելություն, դերանուն, հոգ, նախ-դիր, մակբայ, շաղկապ), անվան բերականական կարգերը («հետևանք»)՝ 6 (ֆանակ, սեռ, ձև, թիվ, տեսակ, հոլով), հոլովումներն ըստ սեռականի վեր-ջավորության՝ 12 (-ի, -ոյ, -ւոյ, -ու, -այ, -եայ, -ան, -եան, -ին, -եր, -եղ, -օր) համարելով, ինչպես նաև ներկայացնելով դերանունների հոլովներն ու հոլովումը («Հոլովք դերանունաց են ըստ անուան, բայց զկոչականն ոչ ու-նին ոչ ամենքեան») ⁷², նախադրությունների հոլովառությունը («Եւ նախ-դիրքն... զանազան հոլովս պահանջեն ի շարադրութեան») ⁷³, անշուշտ, իր հերթին ևս զգալի ծառայություն է մատուցել հայ բերականագիտությանը և գրաբարի ուսուցմանը՝ 100 տարուց ավելի գործող իր դպրոցական բերակա-նությունը:

Այսպիսով ավարտվում է այսպես կոչված լատինաբան բերականների բերականագիտական գործունեությունը, որը և ամենից առաջ նշանավորվում է տպագրիչ ֆեռակաճակաճ աշխատություններով: Ներկայացնելով գրաբարի բերականությունը՝ նրանք, բնականաբար, բազմազան բերականական իրո-դությունների հետ քննության են առել նաև նրա հոլովներն ու հոլովական համակարգը և ըստ կարելիության զարգացրել ու խորացրել դրանց ուսմունքը:

Եվ իսկապես. կատարված քննությունը ցույց է տալիս, որ լատինաբան բերականները զգալի չափով առաջ են մղել գրաբարի հոլովների ուսումնասի-րությունը և Դ. Թրակացու ու նրա մեկնիչների մեկնաբանությունների չա-մանատությամբ նրանց ուսմունքը դրել մի նոր՝ ավելի բարձր աստիճանի վրա:

ПАДЕЖИ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА (ГРАБАРА) В ОСВЕЩЕНИИ ЛАТИНСКИХ ГРАММАТИКОВ

А. С. МАРКАРЯН

Резюме

Авторы латинских грамматик в своих трудах наряду со многими грамматическими явлениями рассматривали и падежи грабара. Все они определяли падежи по значениям и формам склоняемого слова, представляя и характеризуя как одну из грамматических категорий имени. Фр. Ривола считал, что в грабаре пять, Воскан Ереванци — во-семь, а остальные грамматик полагали, что десять падежей, при этом они варьировали их наименования и порядок.

Среди них особо следует выделить работы Мхитара Себастьяни и Багдасара Дпира, которые заложили основу для дальнейшего разви-тия учения о падежах.

⁷¹ Պ ա դ տ ա ս ա ր Դ պ ի Ր, Գիրք բերականութեան, Կ. Պոլիս, 1760, էջ 30—31:

⁷² Պ ա դ տ ա ս ա ր Դ պ ի Ր, Պարզարանություն բերականութեան..., էջ 129:

⁷³ Նույն տեղում, էջ 140: